ծովը: Վերնայարկի սենեակներից մէկը ձեւացնում է մի փոքրիկ մատուռ, քարեղէն սեղանով: Այստեղ էր բնակւում Նարեկացին, այստեղ էր գրում իր սքանչելի գիրքը: Այստեղից տեսաւ նա ս. Աստուածամօրը, աստուածորդի մանուկը գրկում, որի տեսութեանը այնքան մեծ տենչանքով փափագում էր նա: Փոքրիկ Առ-տեր կղզու վրայ կանգնած էր նրա տենչալին, եւ ամբողջ ծովը վառւում էր հրեղէն ճառագայթներով: Իր քարայրից ցած իջաւ Նարեկացին, մօտեցաւ ծովեզրին եւ, որպէս ցամաքի վրայ, նա ջրի վրայով ընթանալով, ոտքով անցաւ ծովը եւ հասաւ կղզուն: Աստուածամայրը տուեց երանելի սուրբի գիրքը աստուածորդի մանուկին, ասելով. «առ տէրէ, այսինքն՝ առ քո տիրոջը: Եւ այն օրից այդ փոքրիկ կղզին կոչուեցաւ Առ — Տէր:

Հին Ռշտունիքը այժմ երկու գաւառների է բաժանուած՝ Գաւաշ եւ Կարճկան, երկուսն էլ կոչւում են իրանց համանուն աւանների անունով, որոնց մէջ գաւառապետներ են նստած: Սկսեալ Հայոց-ձորից, որը Գաւառի հիւսիս-արեւելեան սահմանն է, յիշեալ երկու գաւառները՝ Վանայ ծովակի հարաւային եզերքով՝ տարածւում են մինչեւ Մոգաց եւ Բզնունեաց աշխարհները: Ճանապարհը նոյնպէս ոլորւում է ծովակի եզերքով, երբեմն բոլորովին մօտենում է, երբեմն փոքր-ինչ հեռանում է, բայց երբեք ծովեզերքից չէ բաժանւում: Նա այնքան նեղ է, այնքան դժուարին ելեւէջներ ունի եւ այնքան սարսափելի են նրա անցքերը, որ իզուր չստացաւ իր Կապան անունը: Հայոց երկրի բազմաթիւ կապանների թւում՝ Ռշտունեաց կապանը դժուարանցանելիներից մէկը պէտք է համարել: Ամէն մի քայլում բաւական են մի քանի հրացանաւորներ, որ փակեն մի ամբողջ քարաւանի անցքը եւ, վանդակի մէջ բռնուած թռչունի նման, չթողնեն, որ տեղից շարժուի: Ճանապարհը պտտւում է նեղ ձորերի միջով, որոնց երկու կողմերից եւս բարձրանում են անհնարին ապառաժներ: Եւ այդ սատանայական լաբիւրինթոսը քարաւանի միակ ուղին է, որ տանում է դէպի Բաղէշ եւ Մուշ: Մարդ խեղդւում է անձկութեան մէջ: Իսկ երբ դուրս ենք գալիս նեղ կիրճերից եւ Մուշի ընդարձակ դաշտին ենք հասնում, այն ժամանակ միայն հորիզոնը բացւում է մեր առջեւ, սկսում ենք ազատ շունչ առնել:

Ռշտունիք, այդ ռաշիդների (քաջերի) աշխարհը, սնուցել է իր խիստ եւ վայրենի բնութեան համեմատ՝ մի ինքնուրոյն ժողովուրդ: Նրա բնակիչները՝ իր մթին անտառների եւ ահարկու լեռների նման՝ կոշտ, կոպիտ եւ անխորտակելի են: Հսկայ բնութիւնը ծնել է եւ հսկայ ժողովուրդ: Այստեղ միայն կարելի է տեսնել սահմանակից Հայոց-ձորի վաղեմի տիտանների վիթխարի սերունդը, որ իր քաջութեամբ բնաւ ետ չի մնում դրացի սասունցիներից: Չէ կարելի տեսնել եւ չհիանալ այդ առողջ, կենդանի, մշտազարթ ժողովրդով: